

Հավելված 2
2022 թ. 01.20-ին
կնքված N ԴՏՊ-1160-11012/Մ-3 պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N 1

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	«Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական/վերականգնողական աջակցություն ցերեկային կենտրոնում»
Դրամաշնորհի N	N ԴՏՊ-1160-11012/Մ-3
Դրամաշնորհատու կազմակերպություն	ՀՀ ԱՍՀՆ
Դրամաշնորհառու կազմակերպություն	Մանկական զարգացման հիմնադրամ
Ծրագրի իրականացման ժամանակահատված	01.2022թ. - 12.2022թ.
Հաշվետու ժամանակահատված	Հունվար- մարտ 2022թ
Ներկայացման օր	11.04.2022թ.
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	Ծրագրի համակարգող՝ Անուշ Զեյնալյան

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Ծրագրի մասնագիտական թիմը, աշխատելով համայնքային սոցիալական աշխատողների հետ, ձեռնարկել է կարիքի գնահատմանն ուղղված տնային այցեր, իրականացրել հաշմանդամություն ունեցող, առողջական և/կամ տարբեր խնդիրներ ունեցող, ինչպես նաև ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների երեխաների և երիտասարդների հայտնաբերման և կենտրոններ ուղղորդման աշխատանքներ:

Բազմամասնագիտական թիմը տրամադրել է խորհրդատվություն և մասնագիտական կարծիք՝ հիմնված ինչպես արդեն առկա մասնագիտական /առողջապահական, կրթական և սոցիալական / եզրակցությունների վրա, այնպես էլ իրականացրել կարիքների գնահատում ՄՁ-ի մասնագիտական ծառայությունների մատուցման գործընթացքում կիրառվող մեթոդաբանությամբ:

ՄՁ-ի մասնագիտական թիմը կիրառել է ԿԴԻԳ անձանց և նրանց ընտանիքների կարիքների համալիր գնահատման գործիքակազմ հիմնված ՄՁ մեթոդաբանությամբ: Կազմվել են շահառուների սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագրեր, որոնց հիման վրա մատուցվել են անհրաժեշտ ծառայությունները:

Կազմվել են ծառայությունների մատուցման գրաֆիկներ/դասացուցակ/, տրամադրվել շահառուների ծնողներին և փակցվել կենտրոնների ընդունարաններում:

Ցերեկային կենտրոնները շահառուներին սպասարկել են շաբաթը հինգ օր՝ հետևյալ բովանդակությամբ.

- կյանքի հմտությունների ուսուցանում,
- հոգեբանի, հատուկ մանկավարժի, լոգոպեդի անհատական և խմբային ծառայություններ,
- արտ-թերապիա, երաժշտա- թերապիա, /բացիկների պատրաստում/,
- ադապտիվ ֆիզկուլտուրա,
- սոցիալական աշխատողի ծառայություն:

Շահառուներին մատուցվող մասնագիտական բոլոր ծառայությունները գրանցվել են կենտրոնների մատյաններում և մասնագետների ամենամսյա գրանցման թերթիկներում:

Անհրաժեշտության դեպքում իրականացվել են շահառուների տեղափոխում համայնքներից ցերեկային կենտրոններ:

ՄՁ սուպերվիզորների կողմից իրականացվել են այցեր կենտրոնների մասնագիտական թիմերին խորհրդատվություն տրամադրելու և ծրագրի ընթացքը լավագույնս ապահովելու համար:

Բազմամասնագիտական խումբը իրականացրել է հանդիպում-քննարկումներ շահառուների ծնողների հետ հետևյալ թեմաների շուրջ՝ դրական ծնողավարություն, կարգապահություն, ինքնաձանաչում, վախեր:

Սոցիալական ներառումն ապահովելու նպատակով ցերեկային կենտրոններում շահառուների և նրանց ծնողների համար կազմակերպվել են երկու հանրային միջոցառում՝ բացիկների պատրաստում և հանձնում հասցեատերերին, միջոցառում <<Առողջ ապրելակերպ>> խորագրի ներքո:

ՄՁ սուպերվիզորների կողմից իրականացվել են մշտադիտարկման այցեր:

Ծառայությունների որակը բարելավելու և առաջարկություններ ստանալու նպատակով շահառուների ծնողների շրջանում իրականացվել է անանուն գնահատում, որի արդյունքները

ներկայացնում ենք ստորև:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Ներկայացված գործողությունները հաշվետու ժամանակահատվածում կատարվել են, երեխաները ստացել են մասնագիտական աջակցություն, զուգահեռ սոցիալական աշխատողները աշխատանքներ են իրականացրել շահառուների ընտանիքների հետ:

Մատուցված ծառայությունների արդյունքում ուսումնական գործընթացում նկատվել է դրական դինամիկա, բարելավել են շահառուների կյանքի հմտությունների որակը:

Իրականացված սոցիալ-հոգեբանական խորհրդատվությունների միջոցով, կարգավորվել են ընտանիքներում ծնող-երեխա փոխհարաբերությունները՝ բարելավել հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ընտանիքների սոցիալ- հոգեբանական վիճակը:


Մասնագիտական դասընթացների, հանդիպում-քննարկումների արդյունքում շահառուները և նրանց ընտանիքները տիրապետում են անհրաժեշտ հաղորդակցման, կենցաղավարման, ինքնասպասարկման հմտությունների:

Ծառայությունների որակը բարելավելու նպատակով շահառուների ծնողների հետ իրականացվել է անանուն գնահատում, ներկայացնում ենք վերլուծության արդյունքները.


Հարցմանը մասնակցել է 33 ծնող.

1. Ի՞նչ ծառայություններից է օգտվել կամ օգտվում Ձեր երեխան ցերեկային կենտրոնում.


33 ⊗βη




2. Նշեք Ձեր գնահատականը մատուցվող ծառայությունների վերաբերյալ՝ ընտրելով այն ծառայությունը կամ ծառայությունները որից, դ... վատ, 2-վատ, 3-բավարար, 4-լավ, 5-գերազանց/



3. Ձեր երեխան ունի հաշմանդամության կարգավիճակ




4. Տրամադրված ծառայությունների արդյունքում ինչպիսի՞ արդյունք եք գրանցել




5. Արդյո՞ք Դուք մասնակցել եք ցերեկային կենտրոնի մասնագիտական թիմի կողմից ծնողների համար կազմակերպված սեմինարների/դասընթացների

33 օտբետ




6. Ինչպե՞ս կգնահատեք ծնողների համար անցկացվող սեմինարների որակն ու արդյունավետությունը՝ 1-5 գնահատման սանդղակով

33 օտբետ



7. Ինչպե՞ս կգնահատեք ծնողներին տրամադրվող մասնագիտական անհատական խորհրդատվության որակն ու արդյունավետությունը՝ 1-5 գնահատման սանդղակով



Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեղիա պրոդուկտներ և այլն):

<https://www.facebook.com/1657220827891959/posts/3182185442062149/>

<https://www.facebook.com/1657220827891959/posts/3194350554178971/>

<https://www.facebook.com/1657220827891959/posts/3202692760011417/>

<https://www.facebook.com/1657220827891959/posts/3205515526395807/>

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Քանի, որ յուրաքանչյուր շահառուի զարգացման առանձնահատկությունը և դրանից բխող բարոյության աստիճանը անհատական է, ուստի հիմնական դժվարությունը հանդիսացել է ծառայությունների մատուցման ֆիքսված ժամանակահատվածը, հատկապես նոր ընդունված և ծառայություններ ստացող շահառուների մոտ:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

Կենտրոնի սոցիալական աշխատողները պարբերաբար կտրամադրեն մասնագիտական անհատական խորհրդատվություն՝ ուղղված հաշմանդամություն ունեցող, առողջական և/կամ տարբեր խնդիրներ ունեցող, ընտանիքում ապրելու, զարգանալու, կրթություն ստանալու և հասակակիցների շրջանում լիարժեք ներառվելուն, ինչպես նաև վերջիններիս սոցիալական ծառայությունների հասանելիությանը, իրավունքների և շահերի պաշտպանությանը: Մասնագետները համապատասխանաբար կտրամադրեն մասնագիտական խորհրդատվություն ծնողներին՝ լավագույնս ապահովելու համար շահառուի զարգացման և հասարակության մեջ լիարժեք ներառման գործընթացը:

ՄՁԷ սուպերվիզորները պարբերաբար կիրականացնեն մշտադիտարկման այցեր կենտրոնների մասնագետների աշխատանքի ընթացքին ծանոթանալու, մասնագիտական թիմին խորհրդատվություն տրամադրելու նպատակով:

Բազմամասնագիտական թիմի կողմից կիրականացվեն շահառուների անհատական սոցիալ-հոգեբանական ծրագրերի մոնիթորինգներ ուղղված՝ անհատական զարգացման պլաններում նպատակների փոփոխմանը և նոր նպատակների դրմանը:

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Վայքի և Ջերմուկի կենտրոններում այս տարի բացվել են «Կյանքի հմտություններ» խմբակներ, որոնք հատուկ մշակված մոդուլներով վարում են վերապատրաստում անցած մասնագետները: ՄՁԷ սուպերվիզորը պարբերաբար այցելել և հետևել է իրականացման ընթացքին:

Տնօրեն՝ Լ. Միմոնյան



Հիմնադրամի գործադրման հիմնադրամ